ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Պատվիրատուն՝ ՀՀ մշակույթի նախարարությունը, ստորև ներկայացնում է իր կարիքների համար գրականության հրատարակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-18/80** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2018 թվականի դեկտեմբերի 20-ին** կնքված N **«ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-18/80»** ծածկագրով պայմանագրում **2019 թվականի փետրվարի 20-ին** կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Կատարողի կողմից առաջարկվել է պայմանագրով նախատեսված հրատարակվող գրքի «Կոմիտասը մանուկներին» անվանումը գրել նոր խմբագրությամբ՝ «Ողջույն ձեր նոր կյանքին. Կոմիտասը՝ պատանիներին» (Greeting to Your New Laife: Komitas for Juniors)», ինչը գրքի բովանդակային փոփոխություն չի ենթադրում: Նշված փոփոխությունը կատարելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել երկարաձգել պայմանագրով նախատեսված հրատարակման աշխատանքների փուլի կատարման ժամկետը:

Փոփոխության նկարագրություն N 1: Պայմանագրի թիվ 1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածով նախատեսված աշխատանքների աշխատանքների փուլի կատարման ժամկետի երկարաձգում մինչև 2019 թ-ի մարտի 20-ը:

Փոփոխության հիմնավորում N 1: ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 4-րդ ենթակետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ն. Կարապետյանին:

Հեռախոս՝ 011 58-51-78:

Էլ. փոստ՝ cultproject@mail.ru:

Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀՄՆ-ՄԱԱԾՁԲ-18/80» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «20» 02 2019 թ.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը, ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Ա. Մուրադյանի, մի կողմից, և «Կոմիտասի թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ը, ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն՝ Ն. Կոստանդյանի, (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին

1. Համաձայնագրի առարկան

1.1. Հիմք ընդունելով կողմերի միջև 2018 թվականի դեկտեմբերի 20-ին կնքված հրատարակման աշխատանքների կատարման պետական գնման N «ՀՀՄՆ-ՄԱԱԾՁԲ-18/80» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.6 կետերը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Պատվիրատուն և Կատարողը համաձայնության են եկել Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը.

1.1.1 Պայմանագրի թիվ 1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածով նախատեսված աշխատանքի փուլի կատարման ժամկետի ավարտը՝ «20.02.2019 թ.» բառերը փոխարինել «20.03.2019 թ.» բառերով:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

2.2. Կողմերի միջև մինչ քննված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագրին ուժի մեջ մտնելու պահից:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ մշակույթի նախարարություն Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող.3 Կառավարական տուն 2, հեռ.՝, 010 58-51-78, 011 585178 ՀՎՀՀ 02508054, հ/հ 900011012862 ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գանձապետական վարչությունում	«Կոմիտասի թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ Հասցեն՝ ք.Երևան Արշակունյաց 28, հեռ.՝ 374-11-570570 էլ. փոստ komitasmuseum@gmail.com ՀՎՀՀ 02630484, հ/հ 900018001652 Երևանի թիվ 1 ՏԳԲ
_____ Ա. Մուրադյան (ստորագրություն) Կ.Տ.	_____ Ն. Կոստանդյան (ստորագրություն) Կ.Տ.